

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ» (1972—1982)

Կ. Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

1960—70-ական թթ. շրջադարձային էին սփյուռքահայ համայնքների պատմության նորագույն շրջանում. այդ տարիները Սփյուռքի հասարակական-քաղաքական կյանքի աննախընթաց աշխուժացման ժամանակաշրջան էր, որը սկիզբ առավ Հայոց ցեղասպանության հիսունամյակի հիշատակման առիթով: Հայաստանում և Սփյուռքում ծավալված ժողովրդական լայն շարժումները էապես նպաստեցին Հայ Դատի հետապնդման աշխատանքներին, որոնք զարգացան երկու առանձին ուղղություններով. մի կողմից ծավալվեց քաղաքական-քարոզչական լայն գործունեություն, դիմումներ կատարվեցին պետությունների կառավարություններին և միջազգային կազմակերպություններին, մյուս կողմից սկիզբ առավ մի նոր շարժում, որը նպատակ էր հետապնդում քաղաքական արտակարգ միջոցներով արթնացնել հայության հիշողությունը և համաշխարհային հասարակական կարծիքը: Հայ Դատի հետապնդման լայնատարած աշխատանքները, քաղաքական-քարոզչական ծավալուն գործողություններն ուղղված էին ոչ միայն հայության հիշողության արթնացմանը, այլև միջազգային հանրության, տարբեր պետությունների և միջազգային կազմակերպությունների ուշադրությունը Հայ Դատի վրա բեռեւելու նպատակին: Պետությունների և միջպետական մարմինների, հասարակական և գիտական տարբեր մակարդակներով քննարկումների նախապատրաստման գործում իրենց անզնահատելի լուծման են ներդրել Սփյուռքի այլազան կազմակերպությունները, որոնց շարքում ուրույն տեղն ունի Ամերիկայի Հայկական Համագումար կազմակերպությունը:

Հայկական Համագումարը հիմնադրվել է 1972 թ. իբրև կրթամշակութային և բարեգործական հիմնադրամ, որի պաշտոնական նպատակն էր նպաստել հայ մշակույթի պահպանմանն ու տարածմանը և ամերիկահայերի կրթությանը¹: Սակայն կազմակերպության գործունեությունը կառուցված է այնպես, որ նրա կողմից ֆինանսավորվող ծրագրերը կողմնորոշված են դեպի ավելի լայն նպատակների ու խնդիրների իրականացումը.

1. ԱՄՆ-ի հասարակական կարծիքի ձևավորումը, օրենսդիր և գործադիր իշխանությունների վրա ազդեցության բանեցումը՝ ամերիկյան հասարակության, օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից 1915 թ. Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով:

2. Հայ մշակութային և պատմական արժեքների վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների տարածումը և պայքարը հայ համայնքին անմիջականորեն վերաբերող ապատեղեկատվության դեմ:

Այս նպատակների իրականացմանն է ուղղված կազմակերպության «հա-

¹ Տե՛ս «The Armenian Assembly. Summary Report», Wash., 1973:

Սարակական ծրագրերը», որը խաշաձևվում է կազմակերպության մյուս՝ «կառավարական», «գիտահետազոտական» և «ուսանողական» ծրագրերի հետ և ներառում է ոչ միայն բուն կազմակերպության գործունեության շրջանակները, այլև սերտորեն առնչվում է ամերիկահայ և ամերիկյան լրատվության զանգվածային միջոցների և հաստատությունների գործունեության հետ:

Հայկական Համագումարի «հասարակական ծրագրերը» նախատեսում է հայերին հետաքրքրող հարցերի պարզաբանումը ամերիկյան հասարակությանը՝ լրատվության զանգվածային միջոցների, հատուկ հրապարակումների և ցուցահանդեսների միջոցով: Հայ ազգային արժեքների օգտին ամերիկյան հասարակական կարծիքը ձևավորելու նպատակով կազմակերպությունը պարբերաբար ճշգրիտ տեղեկություններ է տարածում հայ ժողովրդի կենսակերպի, պատմության և մշակույթի վերաբերյալ: Միևնույն ժամանակ միջոցներ են ձեռնարկվում հայերին վերաբերող ապատեղեկատվության դեմ պայքարելու ուղղությամբ: Այդ նպատակով վերստուգվում են հրատարակված նյութերը, լրատվության զանգվածային միջոցների հաղորդումներն ու թողարկումները՝ սխալներն ու բացթողումները բացահայտելու և դրանք համապատասխան անձանց ու կազմակերպությունների ուշադրությանը հրավիրելու համար: Վերոհիշյալ խնդիրների իրականացման համար հիմնադրամի կառուցվածքում ստեղծված է հատուկ մարմին՝ «Հասարակական գործերի կոմիտե»:

Հայկական Համագումարի գործունեության վերաբերյալ ամերիկահայ համայնքին ու ամերիկյան հասարակությանը տեղյակ պահելու և կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկումների մասին պարբերաբար տեղեկացնելու նպատակով կազմակերպությունը հրատարակում է անգլերեն մի շարք պարբերականներ («Նյուսլիթթ», «Ջորնալ», «Աննյուալ ռիփորթ», «Անմեյրի դիս ուիկ» և այլն) և ամերիկահայ մամուլին է տրամադրում հատուկ հրապարակումներ (Press Release-ներ), որտեղ տեղեկություններ են հաղորդվում ամերիկահայերին հուզող հարցերի վերաբերյալ:

Հայկական Համագումարի «հասարակական ծրագրի» կարևոր խնդիրներից մեկը ամերիկահայ համայնքի վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների հավաքումն ու տարածումն է: Այս տեսակետից աչքի է ընկնում 1976 թ. կազմակերպության կողմից հրատարակված «Ամերիկյան և կանադական գիտական հաստատությունների հայ գիտնականների տեղեկագիրը», որտեղ տարբեր բնույթի տեղեկատվական տվյալներ են պարունակվում Հյուսիսային Ամերիկայի շուրջ 1500 հայ գիտնականների մասին²: Տեղեկատվական գործնական նշանակություն ունեն նաև 1981 թ. հրատարակված Կալիֆորնիայի հայերի ժողովրդագրական ուսումնասիրությունը, որի հաշվետվությունը կոչված էր ծառայելու իբրև տեղեկատվության արժեքավոր աղբյուր հայկական բոլոր կազմակերպությունների ու անհատների համար՝ ամերիկահայ համայնքի բազմազան խնդիրների իրականացմանն ուղղված տարբեր ծրագրերի պլանավորման և ձեռնարկման ժամանակ: Նշված հետազոտության հաշվետվությունը ծառայում էր նաև իբրև անկողմնակալ տեղեկագիր ոչ հայկական հաստատությունների ու ամերիկյան պաշտոնյաների համար: Այսպես, հետազոտության տեղեկագրի կրկնօրինակները տրամադրվել էին լրագրողներին, կառավարական հանձնաժողովներին և էթնիկական համայնքների հարցերով ըզբաղվող գերատեսչություններին³:

ԱՀՀ-ն նաև նշանակալից ներդրում ունեցավ 1978 թ. ԱՄՆ-ի Ազգային

² Տե՛ս «Armenian Assembly. Directory of Armenian Scholars in American and Canadian Academic Institutions, 2-nd edition, Wash., 1976:

³ Տե՛ս «The Armenian Reporter», 4. III, 1982:

աշխարհագրական ընկերության պաշտոնական օրգան «Նաշնըլ Զեոգրաֆիկ» հայտնի հանդեսում հայերի մասին հատուկ հոդվածի հրատարակման գործում: «Հպարտ հայերը» խորագիրը կրող 27 էջից բաղկացած հոդվածի հեղինակն էր նշված հանդեսի խմբագրի օգնական Ռոբերտ Պ. Զորդանը, որը լրագրողական մեծ վարպետությունը պատկերել էր հայ ժողովրդի պատմամշակութային վերապրումներն ու տնտեսական բարգավաճումը Խորհրդային Հայաստանում և Սփյուռքում, որոնք հնարավոր էին դարձել շնայած Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցած հալածանքներին և ցեղասպանության դաժան դեպքերին⁴: «Նաշնըլ Զեոգրաֆիկ» հանդեսը 1900—1924 թթ.՝ հայ ժողովրդի համար փոթորկալից և ճակատագրական ժամանակաշրջանում, տասնհինգ անգամ տարբեր առիթներով անդրադարձել էր հայ ժողովրդի կյանքին և պատմական տարբեր իրադարձություններին: Սակայն 1925—1977 թթ. ընթացքում նույն հանդեսում զետեղվել են հայերի մասին պատմող ընդամենը երկու հոդվածներ: 1978 թ. հայերի մասին այդպիսի ծավալուն հոդվածի հրատարակումը, անշուշտ, կոչված էր ճեղքելու Լոզանի խորհրդաժողովից ի վեր հայերի ու նրանց կրած դաժան փորձությունների նկատմամբ ստեղծված մոռացության և անտարբերության մթնոլորտը:

Եվ «Նաշնըլ Զեոգրաֆիկում» տպագրված հոդվածի օրինակը միակը չէր. «հասարակական ծրագրի» շրջանակներում Հայկական Համագումարի ներկայացուցիչները բազմիցս հանդես են եկել ԱՄՆ-ի տարբեր հեռուստա- և ռադիոկայաններով, տեղեկատվական նյութեր են տրամադրել թե ամերիկյան և թե հայկական մամուլին: Հայոց ցեղասպանության, Հայ Դատի և հայ ժողովրդի ազգային կյանքի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ տպագրվեցին ամերիկյան առաջատար մամուլում՝ «Բոստոն Գլոուք», «Լոս Անջելես Քայմզ», «Նյու Յորք Քայմզ», «Վաշինգտոն Փոստ» և այլ թերթերում: Կազմակերպության ներկայացուցիչները նաև բազմաթիվ հանդիպումներ են ունեցել ամերիկյան և ամերիկահայ խոշորագույն թերթերի խմբագիրների ու լրագրողների հետ, և այդպիսի շփումները կրում էին գործնական ու պարբերական բրնույթ: Մասնավորապես, 1979 թ. Լոս Անջելեսում տեղեկատվական և կառավարական խնդիրներին նվիրված ԱՀՀ-ի ժողովին մասնակցում էին ամերիկահայ խոշորագույն թերթերի խմբագիրները, ինչպես նաև ամերիկյան մամուլի ներկայացուցիչները: Ներկաների թվում էին անգլալեզու շեգոթ «Կալիֆորնիա կուրյեր» թերթի խմբագիր Զորջ Մեյսոնը, «Արմենիան Օրգերվերի» խմբագիր Օշին Քեշիշյանը, ՀՀ Դաշնակցության «Ասպարեզ» թերթի խմբագիր Սերժ Սիմոնյանը և «Նոր կյանքի» խմբագիր Հրանտ Սիմոնյանը: Ամերիկյան մամուլը ներկայացնում էին Չ. Չերնիսը («Փաստագեռա Սթար Նյուզ»), Ա. Ֆրիդբերտալը («Գլենդել Նյուզ Պրես»), Ռ. Օ. Ռայլին («Լոս Անջելես Քայմզ») և Զ. Նազարյանը («Վալեյ Նյուզ»): Համագումարի կազմակերպած այս և նրամանատիպ այլ հանդիպումների ընթացքում քննարկվում էին լրատվության զանգվածային միջոցների բնագավառում ամերիկահայ հաստատությունների կողմից առաջնակարգ և հաստատուն դիրքերի ձեռքբերման հնարավորություններն ու հեռանկարները⁵:

Հայությանը հուզող տարբեր հարցերի արդար լուսաբանումը ամերիկյան տեղեկատվական միջոցներով ապահովելու նպատակով կազմակերպությունը 1979 թ. դեկտեմբերին Լոս Անջելեսում բացեց Կալիֆորնիայի իր մասնաճյուղի հովանու տակ գործող Տեղեկատվական կենտրոնը, որի հիմնական խնդիր-

⁴ Տե՛ս «National Geographic», vol. 153, N 6, June 1978.

⁵ Տե՛ս «The Armenian Reporter», 26, VII, 1979.

ներն էին տեղեկատվական տարբեր նյութերի, փաստաթղթերի, տեսաժապավենների, գրքերի և ցուցահանդեսային իրերի հավաքումն ու տարածումը: Հայկական Համագումարի Կալիֆորնիայի խորհրդի տեղեկատվական կենտրոնը ակտիվ գործունեություն ծավալեց ինչպես պետական իշխանության մարմինների հետ հարաբերությունների իրականացման, այնպես էլ լրատվության զանգվածային միջոցներով հայ ժողովրդի վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների տարածման ուղղությամբ: 1980 թ. կենտրոնը պատրաստել և ավելի քան 90 պարբերական հրատարակությունների ու 25 խոշորագույն ռադիո- և հեռուստաընկերությունների է տրամադրել հայերի մասին տեղեկատրվական նյութերի մի հատուկ փաթեթ, որը կրում էր «Հայերը. Արարատի ժողովուրդ» խորագիրը: Այն բաղկացած էր պատմական ակնարկ պարունակող գրքույկից, ցեղասպանության վերաբերյալ փաստագրերից, լրատվական հոդվածներից, քարտեզից և համայնքի կողմից նշվող շուրջ 40 իրադարձությունների օրացույցից⁶: Կազմակերպության ղեկավարները նաև մի շարք հանդիպումներ են ունեցել խոշորագույն լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ և նրանց են տրամադրել այդ տեղեկատվական փաթեթները՝ լրատվամիջոցների կողմից համայնքային իրադարձությունների լուսաբանումը ապահովելու նպատակով: Այսպես, 1980 թ. ԱՀՀ-ի քանքերի շնորհիվ Կալիֆորնիայի երկու հեռուստաընկերություններ եթեր հեռարձակեցին ամերիկահայ համայնքին նվիրված հատուկ հաղորդումներ: Լոս Անջելեսի Քեյ-էն-բի-սի (KNBC) հեռուստաընկերության (4-րդ ալիք) ապրիլին թողարկած տեսանյութը պատմում էր հայերի ցեղասպանության մասին, իսկ Քեյ-սի-ի-թի (KCET) հեռուստակայանի (28-րդ ալիք) թողարկած հաղորդումը նվիրված էր ամերիկահայ համայնքի կյանքի տարբեր կողմերին⁷: Ապրիլի 24-ի նախօրեին հեռարձակված այս հաղորդումները մեծապես նպաստեցին ամերիկյան լրատվամիջոցներով Մեծ Եղեռնի 65-րդ տարելիցի հիշատակման միջոցառումների լուսաբանմանը:

Հայկական Համագումարը ակտիվ գործունեություն ծավալեց նաև 1970—80-ական թվականներին թուրքական կազմակերպությունների և լրատվամիջոցների կողմից ձեռնարկած ապատեղեկատվության դեմ պայքարելու ուղղությամբ: Թուրքական հակահայկական քարոզչության ակտիվացումը 1970-ական թվականների սկզբներին սերտորեն կապված էր սփյուռքահայ իրականության մեջ սկիզբ առած զինյալ քաղաքական նոր շարժման ծավալման հետ, որը հիմնականում ուղղված էր թուրքական դիվանագիտական հաստատությունների և պաշտոնյաների դեմ: Թուրքական քարոզչությունը, այդ թրվում ԱՄՆ-ի թուրքական կազմակերպությունները, փորձում էին օգտագործել հանրային կարծիքի բացասական վերաբերմունքը առհասարակ ահաբեկչության և բռնության նկատմամբ և արհեստականորեն ստեղծել այն սին տպավորությունը, թե հայկական ահաբեկչությունը «անհիմն բռնության» և «խեղաթյուրված իրադարձության համար վրեժխնդրության» արտահայտություն է: ԱՄՆ-ի թուրքական կազմակերպությունները և հատկապես Թուրք-ամերիկյան ընկերությունների համաժողովը լայնամասշտաբ քարոզչական արշավ ծավալեցին ամերիկահայ համայնքի դեմ՝ փորձելով վարկաբեկել հայկական կազմակերպություններին և նրանց մեղադրել ահաբեկչությանը սատարելու ու թուրքական դիվանագիտական պաշտոնյաների սպանությունները հովանավորելու մեջ: Հակահայկական արշավին ակտիվորեն մասնակցում էր նաև Վաշինգտոնի թուրքական դեսպանատունը, որը ամերիկյան իշխանություն-

⁶ Տե՛ս նույն տեղը, 24, IV, 1980:

⁷ Տե՛ս «The Armenian Reporter», 24, IV, 1980.

ներից պահանջում էր դատապարտել հայկական ահաբեկչությունը և հսկողություն տակ առնել ամերիկահայ կազմակերպությունների գործունեությունը: Քուրքական կազմակերպությունները ջանք չէին խնայում ամերիկյան հասարակայնության աչքում հայկական կազմակերպությունները վարկաբեկելու, Հայոց ցեղասպանության փաստը մերժելու, պատմական իրադարձությունները խեղաթյուրելու ուղղությամբ: Այս նպատակներին հասնելու համար օգտագործվում էին ինչպես լրատվության զանգվածային միջոցները, այնպես էլ ամերիկյան իշխանությունների վրա քաղաքական ճնշման (լոբբինգի) գործողությունները:

Հակահայկական քարոզչական արշավը ղեկավարվում էր թուրքական կառավարության կողմից, և այդ փաստը չէր ժխտում Քուրքիայի արտաքին գործերի նախարար Իլթեր Քյուրքմենը՝ «Արմենիան Ռիփորթեր» թերթին տված հարցազրույցում: Այս առնչությամբ նախարարը նշել էր, որ քարոզչական արշավը «նպատակ ունի պարզաբանել ԱՄՆ-ի, Կանադայի և Եվրոպայի հասարակայնությանը, որ ահաբեկչությունը արդարացնելու հայերի փաստարկները զուրկ են պատմական իրականությունից»: «Մենք ցանկանում ենք համոզել այդ հրկրների ժողովուրդներին, որ այն, ինչ նրանք լսում են (հայերից — Կ. Ն.) ոչ մի կապ չունի պատմական իրականության հետ»³, — ասել է Քուրքիայի արտաքին գործերի նախարարը: Այլ կերպ ասած, թուրքական քարոզչության առջև խնդիր էր դրված հերքել պատմական փաստերը, խեղաթյուրել պատմական իրականությունը և միջազգային հանրությանը ապացուցել, որ 1915 թ. ցեղասպանության վերաբերյալ հայերի պնդումները անհիմն են ու իրականությունից զուրկ: Քուրքական քարոզչությունը խնդիրը փորձում էր ներկայացնել հակահայկական դիրքերից, արդարացնել ինչպես համիդյան շրջանի, այնպես էլ երիտթուրքական ու քեմալական իշխանության տարիներին արևմտահայության նկատմամբ կիրառված անմարդկային գործողությունները: Այդ նպատակով վարձվում էին օտարազգի գիտնականներ ու հրապարակախոսներ, կազմվում էր «ճշմարտանման քարոզչության մի խումբակցություն, որն արդար խաղի տպավորություն էր ստեղծում՝ և պատրաստ լսելու մի «սխալ հասկացված գործի հակառակորդ կողմին»⁴: Առաջ էին քաշվում մի շարք շինծու տեսություններ, որոնք կոչված էին հերքելու Հայոց ցեղասպանության փաստը և վերջին հաշվով վարկաբեկելու հայերի արդարացի պահանջները: Մամուլում, ուղիղ- և հեռուստատեսային հաղորդումներում, գիտաժողովներում, գրքերում և հասարակական տարբեր հավաքներում տեղի էին ունենում սուր բանավեճեր, որոնց ընթացքում որոշ գիտնականներ կամ հրապարակախոսներ կասկածի տակ էին առնում հայերի բնաջնջումը: Դրանք ոչ միայն պատմությունը խեղաթյուրող թուրք պատմաբաններն են, այլև նրանց ձայնակցող ամերիկացի որոշ կամակատարներ: Քուրքական հերքումները զգալի ազդեցություն ունեցան որոշ հրատարակիչների, լրագրողների, պատմաբանների ու քաղաքական գործիչների վրա:

Ինչպես արդարացիորեն նշում է ամերիկահայ նշանավոր պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը, այս իրողությունը ցեղասպանության վերաբերողներին ու զոհերի ժառանգներին «կանգնեցրեց ինքնապաշտպանության անհրաժեշտության առջև, որն էլ նրանց ստիպեց նորից ու նորից ապացուցել, որ նրանք իսկապես ենթարկվել են շարագործության՝ անհատականորեն և

³ Տե՛ս «The Armenian Reporter», 19. VIII, 1982:

⁴ Ինչպե՞ր Հովհաննիսյան, Հայերի ցեղասպանությունը, Երևան, 1992, էջ 45:

հավաքականագես»¹⁰։ Հետևաբար, միանգամայն հասկանալի և արդարացի-ված են սփյուռքահայ կազմակերպությունների ջանքերը՝ հայերին հասցեագրված զրպարտությունները մերկացնելու, հայերի բնաջնջումը հերքելու փորձերը կանխելու և Հայ Դատի արդարացի պահանջները տարածելու ուղղու-թյամբ։

Ամերիկյան լրատվամիջոցներում, հասարակական-քաղաքական շրջան-ներում զնալով ավելի էր մեծանում հետաքրքրությունը Հայկական հարցի, 1915 թ. ցեղասպանության, երիտթուրքական շարագործության դատապարտ-ման, հայ ժողովրդի անցյալ և ներկա քաղաքական կյանքի խնդիրների նը-կատմամբ։ Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված էր ամերիկա-հայ հասարակական-քաղաքական նոր կազմակերպությունների, Հայ Դատի հետապնդման նոր մեթոդների առաջադրմամբ։

Հայկական արմատական կազմակերպությունների գործունեության աշ-խուժացումը սփյուռքահայ իրականության մեջ սկիզբ դրեց արևմտահայ քա-ղաքական ճակատագրի նոր ընկալումներին, գործողության նոր շափանիչ-ներին ու մեկնաբանություններին։ 1973 թ. հունվարին Լոս Անջելեսում Թուրքիայի զլխավոր հյուպատոսի և փոխհյուպատոսի սպանությունը 77-ամյա Գուրգեն Յանիկյանի կողմից նշանավորեց այն նոր շարժման ծնունդը, որը հայ ազգային-ազատագրական պայքարի նոր փուլում կյանքի էր կոչվել զին-յալ-քաղաքական ռազմավարության անհրաժեշտությամբ։ Այդ շարժումը նը-պատակ ուներ ճեղքելու Հայոց ցեղասպանության և Հայ Դատի նկատմամբ շուրջ վեց տասնամյակ տևած անտարբերության ու մոռացության մթնոլոր-տը։ Հայկական խմբավորումների գործողությունները «կույր վրեժխնդրություն» չէին, ինչպես դրանք փորձում էր ներկայացնել թուրքական քարոզչությունը. այդ գործելակերպը արտահայտում էր հայ ժողովրդի նկատմամբ գործված պատմական անարդարությունը խաղաղ միջոցներով վերականգնելու վերջին հույսերի կորստի և հիասթափության զգացումները։ 1970-ական թթ. կեսե-րին ԱՍԱԼԱ-ի և հայկական մյուս խմբավորումների հիմնական նպատակը զինված պայքարը անմիջականորեն Թուրքիայի տարածքում ժավալելն ու տարածելն էր։ Այդ առումով պատմական հայրենիքի տարածքները զենքի ուժով ազատագրելու ձգտումները նշանավորում էին «համազգային արժեք-ներ, որոնց իրական իմաստը սեփական ուժերով հայության բախտի տնօրին-ման գաղափարն է»¹¹։

Հայ ժողովուրդը, որն իր ամբողջ պատմության ընթացքում ենթարկվել է բազմաթիվ բռնությունների ու հալածանքների, միշտ էլ մերժել է բռնու-թյունը՝ իբրև իր նպատակներին հասնելու միջոց։ Սակայն, միջազգային հան-րությունը նախևառաջ պետք է դատապարտեր 1915—1923 թթ. հայերի նը-կատմամբ գործադրված ցեղասպանությունը, և եթե դա արվեր ժամանակին, ապա, անշուշտ, կվերանար պատմական արդարությունը արտակարգ քաղա-քական միջոցներով վերականգնելու ռազմավարության անհրաժեշտությունը։

Ուստի պատահական չէ, որ սփյուռքահայ համայնքների լայն զանգված-ները և համասփյուռքյան կազմակերպությունները թեև խանդավառությամբ չէին ընդունում արտակարգ գործողությունները, բայց և այնպես լուրջ քայ-լեր էին ձեռնարկում հայ ժողովրդին հասցեագրված զրպարտությունները մերկացնելու և հայ արմատականության իրական դրդապատճառները միջազ-գային հանրության կարծիքին ներկայացնելու ուղղությամբ։

¹⁰ «The Armenian Genocide in Perspectives», Edited by Richard G. Hovannisian, New Brunswick, 1988, p. 131.

¹¹ Կ. Դավախյան, Հայ սփյուռքի պատմություն, Ե., 1982, էջ 177։

1973 թ. փետրվարին Հայկական Համագումարը չնվազանց կոստրոս, արձագանքելով Յանիկյանի գործողության առնչությամբ ամերիկյան մամուլում սկիզբ առած անդրադարձումներին, հանդես եկավ մի հայտարարությամբ, որում ամերիկահայ համայնքի անունից «ժխտում էր բռնությունը իբրև իր արդարացի ձգտումներին հասնելու ընդունելի միջոց»։ Հայտարարության մեջ մասնավորապես նշվում էր, որ «Հայ Դատի լուծումը պետք է իրագործվի օրինական և ոչ բռնի եղանակով»։ Միաժամանակ ընդգծվում էր, որ Քուրքիայի կողմից «մարդասիրական սկզբունքների բիրտ ոտնահարումը և աշխարհի հզորների երևութական անտարբերությունը դառնության վերջնադրոշմ դրեցին տեղահանված հայերի վրա»։ «Հայ ժողովուրդը դատապարտում է բռնությունը, — ասվում էր հայտարարության մեջ, — նա ցանկանում է հավատալ, որ իր արդար նպատակները կարող են իրագործվել շահավոր, օրինական և խաղաղ ճանապարհներով՝ համապատասխան ազգային և միջազգային ձեռնարկումների միջոցով»¹²։

Նշված հայտարարությունը ուղարկվեց նաև «Նյու Յորք Քայմզ»-ի խմբագրությանը՝ ի պատասխան թերթում տպագրված մի խմբագրականի, որտեղ ասվում էր, թե «չկար տեսանելի պատճառ»¹³ Յանիկյանի կողմից թուրք պաշտոնյաների սպանության համար։

Հայկական Համագումարը գործնական քայլեր ձեռնարկեց նաև թուրքական լրատվամիջոցներով Հայոց ցեղասպանության և ամերիկահայ համայնքի վերաբերյալ ճշմարիտ անդրադարձումների ապահովման ուղղությամբ։ Այսպես, 1977 թ. օգոստոսին ԱՀՀ-ի Տնօրենների խորհրդի համանախագահ Դենիս Փափազյանը հարցազրույց տվեց թուրքական «Գյունայդեն» թերթին, որը տպագրվեց նաև պոլսահայ և ամերիկահայ մամուլում։ Շոշափելով հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը՝ Դ. Փափազյանը հայտնել էր այն տեսակետը, թե «բնդհանուր առմամբ հայերը ոչինչ չունեն թուրք ժողովրդի դեմ, բայց նրանց վրդովեցնում են ճշմարտությունը թաքցնելու և հայ ժողովրդի բնաջնջման պատասխանատվությունից խուսափելու թուրք ղեկավարների համառ փորձերը»։ Դ. Փափազյանը նաև ընդգծել էր, որ «Հայերի ցեղասպանության համար պատասխանատվությունը ժխտելու փոխարեն նրանք պետք է հրապարակախորհն ընդունեն Օսմանյան կայսրության մեղքը»¹⁴։ Անդրադառնալով թուրքական դիվանագիտական ծառայողների նկատմամբ հայ խմբավորումների գործողություններին՝ Հայկական Համագումարի համանախագահը նշել էր հետևյալը. «Չնայած ես դեմ եմ բռնության արարքներին, այնուամենայնիվ ես հասկանում եմ այն մտածելակերպը, որով նրանք առաջնորդվել են։ Հայերի ցեղասպանությունը տեղի է ունեցել տարիներ առաջ, սակայն այսօր կան վերապրողներ...։ Եվ նրանք շատ են՝ ցեղասպանությունից փրկվածները, նրանց զավակներն ու թոռները։ Քանի դեռ թուրքական կառավարությունը ձգտում է մոռացության մատնել այս հանգամանքը՝ հայերի թշնամանքը գնալով ավելի է աճելու»։ Լրագրողի այն հարցին, թե «ի՞նչ պետք է անեն թուրքերը, որպեսզի հայերը փոխեն իրենց վերաբերմունքը Քուրքիայի նկատմամբ», ԱՀՀ-ի համանախագահը այսպես է պատասխանել. «Նախևառաջ թուրքական կառավարությունը պետք է ընդունի անցյալում գործված անարդարությունները և խոստովանի իր մեղքը։ ... Նա պետք է դադարեցնի հայ համայնքի նկատմամբ մեր օրերում գործադրվող ճնշումները»։ Քուրքիայի նկատմամբ հայկական տարածքային պահանջների

¹² «The Armenian Reporter», 15. II, 1973.

¹³ Նույն տեղում։

¹⁴ «The Armenian Reporter», I. IX, 1977.

խնդրի առնչությամբ Փափազյանը այն բնութագրել էր իբրև «կոմպլեքսային խնդիր» և հույս հայտնել, որ «մի օր կծնվի ազատ Հայաստանը»: Այս ամենը կախված է ժամանակից, և այդ նպատակները պետք է իրականացվեն խաղաղ ճանապարհով¹⁵:

Հայությանը վերաբերող ապատեղեկատվության և սխալ անդրադարձումների դեմ պայքարելու նպատակով կազմակերպությունը ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ, վերստուգելով հրատարակված նյութերը, լրատվության զանգվածային միջոցների հաղորդումներն ու թողարկումները՝ սխալներն ու բացթողումները բացահայտելու և դրանց վրա համապատասխան անձանց ու կազմակերպությունների ուշադրությունը հրավիրելու համար: Այսպես, կազմակերպության ներկայացուցիչները ակտիվ արշավ ծավալեցին Հարավարդի համալսարանի պրոֆեսոր Ստանֆորդ Շոուի «Օսմանյան կայսրության և ժամանակակից Թուրքիայի պատմությունը» գրքի կապակցությամբ, որը կասկածի տակ էր առնում 1915 թ. Հայոց ցեղասպանության եղելությունը: Նշված գրքի երկրորդ հատորում բառացիորեն ասված է հետևյալը. «ժամանակի Օսմանյան վարչակազմի գաղտնի փաստագրերի մանրակրկիտ զննումը ակնհայտորեն ցույց չի տալիս, թե «Միություն և առաջադիմություն կոմիտեի» առաջնորդներից կամ կենտրոնական կառավարության անդամներից որևէ մեկը կոտորածների հրահանգ է արձակել»¹⁶: Հարկ է նշել, որ թուրքական իշխանությունները պրոֆ. Ս. Շոուին թույլ էին տվել հետազոտելու Թուրքիայի գաղտնի արխիվները այն ժամանակ, երբ գիտնականների ու հետազոտողների մեծ մասի համար այդ նույն արխիվները սնմատուղի էին մնում: Ակնհայտ է, որ ամերիկացի այս գիտնականը, միտումնավոր շրջանառության մեջ էր դրել այնպիսի արխիվային փաստաթղթերը, որոնք չէին պարունակում հայերի ցեղասպանության կազմակերպման գործում երիտթուրքական կառավարության մեղավորությունը ապացուցող վկայություններ: Մինչդեռ հեղինակը լիովին անտեսել էր ամերիկյան, բրիտանական, ֆրանսիական, գերմանական և ռուսական արխիվներից հայտնաբերված այն բազմաթիվ փաստագրերն ու վավերագրերը, որոնք միանշանակորեն ապացուցում են երիտթուրքական կլիկի կողմից Հայոց ցեղասպանության կազմակերպման փաստը: Ուստի կան հիմքեր պնդելու, որ Շոուն, միտումնավոր անտեսելով այլ աղբյուրներն ու վկայությունները, կատարում էր թուրքական պաշտոնական քարոզչության պատվերը: Ուրեմն արդարացված էին ամերիկահայ մի շարք կազմակերպությունների ու երեկելի գործիչների բողոքները այս գրքի տպագրման առնչությամբ: Այս ուղղությամբ հատկապես նկատելի ջանքեր է գործադրել ամերիկահայ նշանավոր պատմաբան, Հայկական Համագումարի գործադիր մարմնի անդամ Ռիչարդ Հովհաննիսյանը, որը և նախաձեռնել էր նշված գրքի դեմ ամերիկահայ համայնքի բողոքի ակիբը: Հայկական Համագումարը նույնպես ներգրավվեց այս աշխատանքներում և նամակների հոսք կազմակերպեց Շոուի գիրքը տպագրած Քեմբրիջի համալսարանի հրատարակչության հասցեով՝ պահանջելով անհրաժեշտ ուղղումներ կատարել վիճելի գրքի երկրորդ հրատարակությունում: Քեմբրիջի համալսարանի հրատարակչության տնօրեն Զ. Շուլմանին ուղղված նամակում ԱՀՀ-ի համանախագահ Գ. Փափազյանը, խորը անհանգստություն հայտնելով Ս. Շոուի տխրահռչակ գրքում տեղ գտած էական խեղաթյուրումների առնչությամբ, միաժամանակ պահանջում էր «միջոցներ ձեռք առնել Շոուի շարաքաստիկ

¹⁵ Տե՛ս «Asbarez», 21. IX, 1977:

¹⁶ «The Armenian Reporter», 16. III, 1978.

զրբի տպագրութեան հետեանքով առաջացած երկարատև և անդամանելի վնասը մեղմացնելու համար»¹⁷։

Ամերիկահայ համայնքում մեծ անհանգստութիւն առաջացրին նաև թուրք պատմաբան Քիմալ Կարպատի առաջ քաշած դրույթները 1981 թ. Պիտսբուրգի համալսարանում տեղի ունեցած գիտաժողովում, որը կրում էր «ժամանակակից Թուրքիա. Քիմալ Աթաթուրքի ժառանգութիւնը» խորագիրը։ Գիտաժողովի ընթացքում Ք. Կարպատը, նկարագրելով ժամանակակից թուրքական հանրապետութեան ստեղծմանը նախորդած պատմութիւնը, նշում էր, թե 1915 թ. թուրքերը հարկադրված էին դիմագրավել ներքին և արտաքին թշնամիների հարձակումներին՝ իրենց հայրենիքը պաշտպանելու համար։ Հերթելով հայերի նկատմամբ գործված պատմական ոճրագործութեան իրողութիւնը, Կարպատը, պատմական կեղծ էքսկուրսներ կատարելով և լղարիկ պատճառաբանումների ու արդարացումների վրա հիմնվելով, երեսպաշտորեն հայտարարում էր, թե «հայերը դեռ շարունակում են կառչած մնալ այն սքախալ հետևութեանը, թե քսաներորդ դարի սկզբին ցեղասպանութիւն է տեղի ունեցել»¹⁸։ Հայ համայնքում տագնապ էր առաջացրել նաև այն փաստը, որ վերոնշյալ մեկնաբանութիւններն արվել էին Պիտսբուրգի համալսարանի կողմից կազմակերպված գիտաժողովում, և ամերիկահայերին հետաքրքրում էր այն հանգամանքը, թե արդո՞ք համալսարանը նույնանման դիրքորոշում ունի հայկական հարցում։ Ամերիկահայ համայնքի անունից գիտաժողովին մասնակցում էր Հայկական Համագումարի անդամ Կիսսի Պետեյանը, որը գիտաժողովի ժամանակ ներկայացրեց հայկական տեսակետները և փաստագրական տվյալներով մերկացրեց թուրք գիտնականի պնդումների անհիմն լինելը։

Պատմական փաստերը խեղաթյուրելու և 1915—1923 թթ. հայերի ցեղասպանութեան եղելութիւնը մերժելու նպատակով թուրքական քարոզչութիւնը գործի էր դրել նաև ամերիկյան լրատվութեան զանգվածային միջոցները։ Մամուլն ու հեռուստատեսութիւնը ակտիվորեն օգտագործվում էին ամերիկյան հասարակական կարծիքը ապակողմնորոշելու, այն հայերի ազգային արժեքների դեմ տրամադրելու, ամերիկահայ համայնքի մասին թյուր ըմբռնում ստեղծելու համար։ Հայերի դեմ ուղղված զրպարտութիւնները հիմնավորելու նպատակով ԱՄՆ-ի թուրքական կազմակերպութիւնները վկայակոչում էին հայկական խմբավորումների գործողութիւնները թուրքական դիվանագիտական հաստատութիւնների և պաշտոնյաների նկատմամբ և կոչ էին անում դատապարտել «հայկական ահաբեկչութիւնը», սակայն անտեսելով դրա իրական դրդապատճառները և համառորեն մերժելով հայկական ջարդերի եղելութեան փաստը։ Այսպես, 1980 թ. Թուրք-ամերիկյան ընկերութիւնների համաժողովը «Նյու-Յորք Թայմզ» թերթում զետեղեց մի դիմում-հայտարարութիւն, որում «խաղաղասեր բոլոր ամերիկահայերին» կոչ էր անում դատապարտել հայ զինյալների կողմից Թուրքիայի դիվանագիտական ծառայողների սպանութիւնը։ «Հայկական ահաբեկչութիւնը» որակելով իբրև «երեք սերունդ առաջ տեղի ունեցած խեղաթյուրված իրադարձութեան համար վրեժխնդրութիւն»՝ Թուրք-ամերիկյան ընկերութիւնների համաժողովը ամերիկյան վարչակազմին, Կոնգրեսին, ՄԱԿ-ին, «բարի կամքի բոլոր մարդկանց» և նույնիսկ «բարի կամքի տեր բոլոր հայերին» կոչ էր անում «դատապարտել ահաբեկչութիւնը» և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել բռնութեանը վերջ տալու համար¹⁹։

¹⁷ «The Armenian Reporter», 16. III, 1978.

¹⁸ «The Armenian Assembly of America. Newsletter», vol. 8, Winter, 1981, p. 2.

¹⁹ Տե՛ս «The Armenian Reporter», 25. XII, 1980:

«Նյու Յորք Քայմզ» թերթի խմբագրությանը հասցեագրված նամակում Հայկական Համագումարի գործադիր տնօրեն Ռոս Վարթյանը, արձագանքելով թերթում զետեղված վերոհիշյալ հրապարակմանը, մասնավորապես նշում էր, որ Հայկական Համագումարը «դատապարտում է բռնության բոլոր ակտերը, ներառելով թուրքական հաստատությունների ու պաշտոնյաների նկատմամբ գործած վերջին հարձակումները, ինչպես նաև թուրքերի կողմից հայ ժողովրդի նկատմամբ գործադրված ցեղասպանությունը և հայերի ու մյուս փոքրամասնությունների քաղաքացիական և մարդու իրավունքների շարունակվող խախտումները թուրքիայում»²⁰։ Միաժամանակ խմբագրության ուղադրությունը հրավիրվում էր թուրքական կազմակերպության հայտարարության մեջ տեղ գտած կոպիտ անճշտությունների և միտումնավոր բացթողումների վրա։ Ընդգծվում էր, որ քաղաքական և գիտական տարբեր մակարդակներով ընդունված փաստ է, որ 1915 թ. հայերի ցեղասպանությունը կառավարության կողմից ծրագրված, վավերացված և իրագործված գործողություն էր, այլ ոչ թե «խեղաթյուրված իրադարձություն»։

Մեկ այլ դեպքում Համագումարը արձագանքեց «Քրիսչըն Սայնս Մոնիթոր»-ում տպագրված «Թուրքիան հավաքում է ուժերը» հոդվածին՝ նամակով դիմելով խմբագրությանը և Թուրքիայի մասին ներկայացնելով հավելյալ տեղեկություններ, այդ թվում նաև ազգային փոքրամասնությունների նկատմամբ շարունակվող խտրականությունների քաղաքականության վերաբերյալ²¹։

ԱՄՆ-ի թուրքական կազմակերպությունները հակահայկական աղմկոտ արշավ ծավալեցին հատկապես 1982 թ. հունվարին Լոս Անջելեսում Թուրքիայի զխավոր հյուպատոս Քեմալ Արիկանի սպանության կապակցությամբ։ Լրատվության զանգվածային միջոցների օգնությամբ ամերիկյան հասարակական կարծիքը ենթարկվում էր ինտենսիվ մշակման, ամենուրեք փորձեր էին արվում ապացուցելու հայերի ցեղասպանության վերաբերյալ հայտարարությունների անհիմն լինելը։ Թուրքական քարոզչության այդ բոլոր գործողությունները ցեղասպանության ճանաչման քաղաքական, նյութական և բարոյական պատասխանատվությունից խուսափելու նպատակ էին հետապնդում։

Ամերիկահայ համայնքում հասարակական մեծ արձագանք գտավ հատկապես 1982 թ. «Ուոլ Սթրիթ Ջորնալ» ազդեցիկ թերթում տպագրված «Ահաբեկչությունը տանը» խմբագրականը, որտեղ մասնավորապես ասվում էր, թե 1915 թ. թուրքերի կողմից իրականացված հայերի կոտորածները «միտումնավոր կերպով հրահրվել էին հայ ահաբեկչական խմբերի կողմից այն հույսով, որ Եվրոպայի քրիստոնյա տերությունները կպաշտպանեն իրենց հավատակիցներին մահմեդական թուրքերից և կստեղծեն առանձին հայկական պետություն»²²։ Այնուհետև, ազավաղելով հայերի ու հրեաների, թուրքերի ու նացիստների միջև զուգահեռները, խմբագրականը արտահայտում էր այն տեսակետը, թե հայերի ցեղասպանության զոհերին չի կարելի արդարացնել թուրք դիվանագետների սպանության համար, քանի որ հրեական ահաբեկչական խմբերը չեն սպանում Գերմանիայի դեսպաններին կամ հյուպատոսներին։ Նշված հոդվածում տեղ գտած այս կարգի պատմական կոպիտ ան-

²⁰ «The Armenian Reporter», 15. I, 1981.

²¹ Տե՛ս «A. A. A. Newsletter», vol. 8, Winter, 1981, p. 7:

²² «Wall Street Journal», February 1, 1982, «Армянский вопрос на страницах зарубежной печати». Научно-информационный бюллетень. АН АрмССР, № 5 (54), 1982, с. 10—11;

ճշտություններն ու հերյուրանքները չէին կարող անհանգստություն շահա-
 ջացնել ամերիկահայ հասարակական լայն շրջանակներում, և համայնքի երե-
 վելի շատ գործիչներ ու կազմակերպություններ իրենց անհամաձայնությու-
 նը հայտնեցին հողվածում արտահայտված թյուր տեսակետների առնչու-
 թյամբ: Առաջիններից մեկը արձագանքեց Ամերիկայի Հայկական Համագու-
 մարը, որը «Ուոլ Սթրիթ Ջորնալի» խմբագրությունը հասցեագրված նամա-
 կում անընդունելի էր համարում թերթի այն անհիմն պնդումը, թե հայ ժո-
 ղովուրդը ինքն է հարուցել իր իսկ բնաջնջումը: Վիճարկելով հողվածի մի
 շարք այլ հիմնազուրկ դրույթները՝ Համագումարը առաջարկում էր, որ «Ուոլ
 Սթրիթ Ջորնալի» նման հեղինակավոր թերթերը ձեռք առնեն բոլոր միջոց-
 ները Հայոց ցեղասպանությունից առաջացած բարոյահոգեբանական վերքերը
 բուժելու համար և շաշակցեն պատմությունը աղավաղելու և կիսաճշմարտու-
 թյունը մատուցելու թուրքական ջանքերին²³: Համանման բնույթի նամակներ
 և մեկնարանություններ խմբագրության հասցեով հղեցին նաև ամերիկահայ
 մի շարք ականավոր մտավորականներ ու գործիչներ, այդ թվում նաև Մար-
 ջորի Հովսեփյան-Դոբկինը, Պիտեր Սոուրյանը, Լեո Համալյանը, Հարի Քե-
 յիշյանը, Վիկտորիա Մակուլյանը և ուրիշներ²⁴:

Հայկական կազմակերպությունները վարկաբեկելու և նրանց՝ ահաբեկ-
 լուծյանը հովանավորելու մեջ մեղադրելու թուրքական քարոզչության փոր-
 ձերը տապալելու նպատակով Հայկական Համագումարը հրապարակեց մի
 հայտարարություն, որում դատապարտում էր Լոս Անջելեսում Թուրքիայի
 հյուպատոս Փ. Արիկանի սպանությունը, բայց միաժամանակ հանրային կար-
 ծիքին ներկայացնում էր հայ արմատականության դրդապատճառները: «Ամ-
 բողջ աշխարհի հայերը, — ասվում էր հայտարարության մեջ, — մեծ վիշտ
 են ապրում մեկ և կես միլիոն իրենց հայրենակիցների կորստի համար, որոնց
 բնաջնջումը 1915—1923 թթ. այնուամենայնիվ պետք է ճանաչվի ու փոխ-
 հատուցվի Թուրքիայի կողմից: Այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհի առա-
 ջատար մարդկությունը դատապարտել է հայ ժողովրդի նկատմամբ գործա-
 դրված ցեղասպանությունը, թուրքական ղեկավարները համառորեն ժխտում
 են կառավարության կողմից ծրագրված այս գործողությունը և դրանով իսկ
 ավելի են լիցքավորում վերապրողների վրդովմունքը²⁵: Այնուհետև արդա-
 բացիորեն նշվում էր, որ եթե Թուրքիայի կառավարությունը ժամանակին
 ընդուներ և դատապարտեր հայերի ցեղասպանության փաստը, ապա երբեք
 չէր լինի այն հուսախաբուծության զգացումը, որը հանգեցրեց բռնության ցա-
 վալի գործադրումներին: Հայկական Համագումարի վերոհիշյալ հայտարարու-
 թյունը տարածվեց ամերիկյան 35 խոշորագույն լրատվամիջոցներին, այդ
 թվում նաև «Լոս Անջելես Քայմզ», «Լոս Անջելես Հերալդ էքզամիներ», «Զի-
 կագո Սան Քայմզ», «Մայամի Հերալդ», «Տրեզնո Բի» և այլ թերթերին²⁶,
 ինչպես նաև Սենատի ու Կոնգրեսի բոլոր անդամներին: Մեծ թվով ազդեցիկ
 օրենսդիրներ, այդ թվում կոնգրեսմեններ Լ. Ասպինը, Վ. Պրոքսմայերը, Թ.
 Օ' Նեյլը, Կ. Ջարլոկին, Լ. Համիլտոնը և ուրիշներ, իրենց համերաշխությունը
 հայտնեցին Հայկական Համագումարի առաջ քաշած տեսակետների հետ և
 Թուրքիային կոչ արեցին ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությու-
 նը²⁷: Սակայն այդ կոչերը եզակի բնույթ էին կրում և չէին արտահայտում

²³ «A. A. A. Newsletter», vol. 9, N 1, Spring, 1982, p. 7.

²⁴ ՏՆ՝ «Армянский вопрос на страницах зарубежной печати. Научно-информа-
 ционный бюллетень. АН АрмССР, № 5 (54), 1982., էջ 12—16:

²⁵ «The Armenian Reporter», 25. II, 1982.

²⁶ «A. A. A. Newsletter», vol. 9, N 1, Spring, 1982, p. 7.

²⁷ ՏՆ՝ «The Armenian Reporter», 6. V, 1982:

ԱՄՆ-ի պաշտոնական դիրքորոշումը, որը պայմանավորված էր ՆԱՏՕ-ի գծով ռազմավարական դաշնակից Թուրքիայի հետ հարաբերություններին չվնասելու և Թուրք-ամերիկյան հարաբերություններում ավելորդ բարդություններ չառաջացնելու ԱՄՆ-ի պետական շահով: Ամերիկահայ համայնքի համար ամերիկյան բարձրաստիճան օրենսդիրների հայտարարությունները հայկական ջարդերի ճանաչման մասին ավելի շուտ ունեին բարոյահոգեբանական, քան քաղաքական նշանակություն: Դրանք չէին կարող փոխել ԱՄՆ-ի վարչակազմի բացասական վերաբերմունքը Հայ Դատի նկատմամբ, սակայն մեծ քարոզչական և գաղափարախոսական ներգործություն ունեցան ամերիկյան հասարակական-քաղաքական կյանքում:

1982 թ. «Զիկագո Թրիբյուն» թերթում տպագրվեց Թուրք-ամերիկացիների միացյալ կազմակերպության փոխնախագահ Քյունսեր Քյուզայի նամակը, որտեղ մասնավորապես ասվում էր, թե «այսպես կոչված հայերի ցեղասպանությունը մի հոգեվիճակ է, որը ստեղծվել է անհաջողակների կողմից 65 տարվա միտումնավոր և թունոտ ատելություն արշավի ընթացքում: Օսմանյան կայսրության ոչ մի վավերական փաստաթուղթ չի պարունակում որևէ ապացույց այն մասին, թե ապստամբ հայերի նկատմամբ իրադրոժվել է ծրագրված ցեղասպանություն»²⁸: Այս զավեշտական պնդումը նույնպես անպատասխան չմնաց. ԱՀՀ-ն պատասխան-նամակով դիմեց թերթի խմբագրությանը, նշելով, որ երիտթուրքական կառավարության կողմից մեկ և կես միլիոն արևմտահայերի բնաջնջումը անվիճելի պատմական փաստ է, որը ապացուցող լիառատ վկայություններ են պարունակվում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի և այլ երկրների արխիվներում:

Մամուլում արված նմանատիպ հայտարարությունների և բազմաթիվ հրապարակումների միջոցով Թուրքական քարոզչությունը ձգտում էր ցեղասպանության ճանաչման վերաբերյալ հայկական պահանջները կապել միջազգային ահաբեկչության հետ, դրանով իսկ վարկաբեկելով Հայ Դատի խնդիրը և անպատկառորեն անարգելով միլիոնավոր անմեղ զոհերի հիշատակը:

Հակահայկական քարոզչական արշավին ակտիվորեն մասնակցում էր նաև Վաշինգտոնում Թուրքիայի դեսպանությունը, որը ակնհայտ զրպարտություններ և անհիմն մեղադրանքներ էր տարածում հայերի մասին: Ամերիկյան հասարակությունը ապակողմնորոշելու և հայ համայնքի դեմ զրգռելու նպատակով Թուրքական դիվանագիտությունը փորձում էր խաղալ ամերիկացիների կրոնական զգացմունքների վրա և կեղծ տեղեկատվություն էր տարածում հայերի մասին: Այսպես, 1981 թ. ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Սուքրու էլեբգալը հանդես եկավ ամերիկյան խոշորագույն հեռուստակայաններից մեկի՝ «էյ-Բի-Մի» (ABC) հեռուստաընկերության լուրերով և իր հարցազրույցում հայտնեց այն կեղծ վարկածը, թե իբր Հովհաննես Պողոս պապի նկատմամբ մահափորձ կատարած Մեհմեթ Ալի-Աղչան կապված է հայկական զաղտնի կազմակերպությունների հետ: Թուրքիայի դեսպանը նաև հայտնել էր, թե նա կարող է լրացուցիչ փաստեր և վկայություններ հաղորդել Աղչայի մասին, և մայիսի 15-ին հեռուստաընկերությունը նրան հրավիրեց մասնակցելու «Հարցեր և պատասխաններ» հաղորդմանը, որին բացի Թուրքիայի դեսպանից մասնակցում էին նաև ահաբեկչության հարցերով ԱՄՆ-ի դեսպաններ՝ Քուենտինը և Սեյլինջերը:

Հայկական Համագումարի Վաշինգտոնի գրասենյակի անձնակազմը մեծ ջանքեր գործադրեց Թուրքական դեսպանի անհիմն զրպարտությունները մեր-

²⁸ «A. A. A. Newsletter», vol. 9, N 1, Spring, 1982, p. 7.

կացնելու, ամերիկյան հասարակայնության աչքում հայ համայնքը վարկաբեկելու փորձերը շեղոքացնելու ուղղությամբ: Տեղեկանալով «էյ-բի-Սի» հեռուստաընկերության «Հարցեր և պատասխաններ» հաղորդումով էլեքդադի հանդես գալու մասին, ԱՀՀ-ի Վաշինգտոնի գրասենյակը անմիջական կապի մեջ մտավ հեռուստաընկերության պրոդյուսերի հետ՝ անհանգստություն հայտնելով հայերին հասցեագրված հիմնադրված մեղադրանքների առնչությամբ, խմբագրությանը տրամադրեց համապատասխան բնույթի տեղեկատվական նյութեր: Բացի այդ, ԱՀՀ-ն Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբին, և Հայկական Իրավունքների խորհրդին տեղեկացրեց, որ Սուբրու էլեքդադը հավանաբար հանդես կգա ամերիկյան հեռուստատեսությամբ և կրկին կփորձի Հոուսի պապի նկատմամբ կատարված մահափորձը կապել հայերի հետ: Հայ Դատի հանձնախումբը և Հայկական Իրավունքների խորհուրդը նամակներով դիմեցին «էյ-բի-Սի» հեռուստաընկերությանը՝ արտահայտելով իրենց մտահոգությունը նշված խնդրի առնչությամբ²⁹:

Հայկական Համագումարի և ամերիկահայ մյուս կազմակերպությունների գործադրած ջանքերը այս ուղղությամբ ի վերջո տվեցին իրենց դրական արդյունքը, քանզի նշված հաղորդման ընթացքում ձախողվում են ամերիկյան հասարակությանը ապակողմնորոշելու, այն ամերիկահայ համայնքի դեմ բացասաբար տրամադրելու և հայերի մասին բացահայտ ապատեղեկատվություն տարածելու Թուրքիայի դեսպանի բոլոր փորձերը: Հաղորդման խմբագրությունը, հայկական տեսակետներին նախապես իրազեկ լինելով, կասկածի տակ առավ Թուրքական դեսպանի վկայակոչումները և խնդրեց ապացույցներ ներկայացնել հայ ահաբեկչության և Հոուսի պապի դեմ կատարված մահափորձի միջև կապի վերաբերյալ: Դեսպանը, բնականաբար, չէր կարող ներկայացնել իր պնդումները հիմնավորող և ոչ մի փաստարկ, քանզի ազգությամբ Թուրք Ալի Աղջան ոչ մի կապ չունեք հայ դինյալների հետ: Հայկական Համագումարը նաև դիմեց ամերիկյան խոշորագույն լրատվամիջոցներին և տեղեկատվական գործակալություններին՝ պահանջելով մանրակրկիտորեն վերստուգել Թուրքիայի դեսպանությունից ստացվող նման կարգի բոլոր հաղորդագրություններն ու տեղեկատվությունները³⁰:

Թուրքական հակահայկական քարոզչական գործողությունները զսպելու համար Հայկական Համագումարը նաև հսկայական նախապատրաստական բացատրական աշխատանք է կատարում ամերիկյան լրատվության զանգվածային միջոցների հետ՝ նրանց տրամադրելով մեծաքանակ տեղեկատվական նյութեր և հորդորելով ավելի հավասարակշռված և ճշմարիտ մտեցում ցուցաբերել ամերիկահայ համայնքի կյանքը լուսաբանելու ժամանակ: Կազմակերպությունը մեծ ջանքեր էր գործադրում, որպեսզի ամերիկյան մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը չսահմանափակվեն միայն զգայացունց իրադարձությունների լուսաբանմամբ, ինչպիսիք են հահաբեկչական գործողությունները, որոնք ներկայացնում էին համայնքի կյանքի միայն մեկ կողմը: Ընթացիկ անցքերը ավելի ճիշտ և խորն ըմբռնելու և մատուցելու համար անհրաժեշտ էր նախևառաջ շեշտը դնել պատմամշակութային իրադարձությունների լուսաբանման վրա: Ամերիկահայ համայնքի վերաբերյալ բազմաբնույթ հաղորդումների ու թողարկումների պատրաստումն ու հեռարձակումը ամերիկյան առաջատար հեռուստա- և ռադիոկայաններով, անշուշտ, պետք է նպաստեր հայ ժողովրդի պատմամշակութային արժեքների օգտին ամերիկյան հասարակական լայն շրջանակների կողմնորոշմանը: Այս առու-

²⁹ Տե՛ս «A. A. Newsletter», vol. 8, Winter, 1981, p. 7:

³⁰ Տե՛ս «The Armenian Reporter», 28. V, 1981:

մով ԱՀՀ-ն նույնպես կատարեց նշանակալից ներդրում: Այսպես, ԱՀՀ-ի Լոս Անջելեսի մասնաճյուղի ջանքերով ամերիկյան մի շարք հեռուստաընկերություններ իրենց ծրագրերում սկսեցին մեծ ուշադրություն դարձնել հայ համայնքին հուզող տարբեր խնդիրների, այդ թվում նաև Հայ Դատի հետապնդման լուսաբանման վրա և իրենց հաղորդումներում բազմաբնույթ տեղեկություններ հաղորդել հայ համայնքի կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ³¹:

Ամերիկյան հասարակական կարծիքը հայ ազգային արժեքների օգտին ձևավորելու նպատակով Համագումարը կազմակերպել է նաև մի շարք ցուցահանդեսներ, որոնց ընթացքում հանրային լայն շրջանակների ուշադրությանն էին ներկայացվում հայ արվեստի և պատմամշակութային ժառանգության ուշադրավ ձեռքբերումները: Մասնավորապես, կազմակերպված «Հայ ոգի» երաժշտական մի քանի փառատոնները ոչ միայն հիշատակում էին հայ պատմության ողբերգական իրադարձությունները, այլև նվիրված էին հայ ազգային մնայուն արժեքների վերածննդի ու վերակենդանացման փառաբանմանը³²: Հայկական Համագումարը նաև նշանակալից ներդրում ունեցավ 1979 թ. Լոս Անջելեսի կենտրոնական գրադարանում հայ մշակույթին նվիրված ցուցահանդեսի կազմակերպման գործում³³, 1980 թ. հայ մշակույթի և պատմության ցուցահանդեսներ կազմակերպվեցին նաև Գլենդելի հանրային գրադարանում, որտեղ հասարակության ուշադրությանն էին ներկայացված հայ գրականության, քանդակագործության, արհեստների, ձեռագրական ուշագրավ կոթողներ, լուսանկարներ, գրքեր, գեղանկարներ և այլն: Ցուցահանդեսներն ուղեկցվում էին նաև երաժշտական և պարային ծրագրերով, կինոնկարների ցուցադրմամբ և այլ միջոցառումներով³⁴:

Ամերիկահայ հասարակական կյանքում հատկապես մեծ արձագանք գրտավ 1982 թ. կազմակերպված ցուցահանդեսների շարքը, որը կրում էր «Կալիֆորնիայի հայկական համայնքը. առաջին հարյուրամյակը» խորագիրը: Նշված ցուցահանդեսները կազմակերպվել էին Հայկական Համագումարի, Կալիֆորնիայի պետական համալսարանի հայագիտության ամբիոնի և Հայ ֆիլմերի հիմնադրամի կողմից³⁵: Այդ ցուցահանդեսների կազմակերպչական, ֆինանսական և նյութական նախապատրաստման գործում նույնպես զգալի ներդրում էր ունեցել Հայկական Համագումարը, որի ջանքերի շնորհիվ 1981 թ. Կալիֆորնիայի նահանգային մարդասիրական խորհուրդը 7.500 դոլարի նըպաստ էր հատկացրել՝ Կալիֆորնիայում հայերի հաստատման հարյուրամյակը նշելու համար³⁶: Միջոցառումների ընթացքում ներկայացվում էին պատմական լուսանկարներ, կինոնկարներ, պատկերազարդ գրքուկներ, որոնցում պատկերված էր Կալիֆորնիայի հայ համայնքի շուրջ հարյուրամյա պատմությունը՝ Կալիֆորնիայում առաջին հայ վերաբնակիչների հաստատումից սկսած մինչև ներգաղթյալների վերջին ալիքը: Լուսանկարների ցուցահանդեսը պատմում էր համայնքի հասարակական և մշակութային կազմակերպությունների. հայ մամուլի, եկեղեցու, ամերիկյան հասարակական կյանքում հայերի ներգրավման և համայնքի կյանքի մի շարք այլ կողմերի մասին: Միջոցառման հաջողությունը մեծ մասամբ պայմանավորված էր այն հանգամանքով, որ կազմակերպվել էր հիմնականում մարդաշատ վայրերում, որտեղ մարդ-

³¹ Տե՛ս «A. A. A. Newsletter», vol. 9, N 1, Spring, 1982, p. 6:

³² Տե՛ս «The Armenian Observer», 8. V, 1974:

³³ Տե՛ս «Asbarez», 4. IV, 1979:

³⁴ Տե՛ս «The Armenian Reporter», 21. II, 1980:

³⁵ Տե՛ս «A. A. A. Newsletter», vol. 9, N 1, Spring, 1982, p. 2:

³⁶ Տե՛ս «The Armenian Reporter», 19. XI, 1981:

կանց առավել ստվար զանգվածներ հնարավորություն ունենին ծանոթանալու հայ համայնքի կյանքին ու պատմությանը: Այսպիսի ցուցահանդեսներ կազմակերպվեցին Կալիֆորնիայի խոշորագույն քաղաքների՝ Լոս Անջելեսի, Սան Ֆրանցիսկոյի, Ֆրեզնոյի հանրային գրադարաններում, քաղաքապետարաններում, քաղաքային և նահանգային այլ հիմնարկություններում ու հանրային այլ վայրերում: Ցուցահանդեսները լայնորեն լուսաբանվում էին նաև ամերիկյան մամուլով, ռադիոյով և հեռուստատեսությամբ:

Նշված բոլոր ցուցահանդեսները անշուշտ կոչված էին նպաստելու ամերիկահայերի հասարակական իմիջի (կերպարի) բարձրացմանը ավելի նշանակալից աստիճանի: Վերջիվերջո, հայ մշակութային արժեքների ներկայացումը ամերիկյան հասարակությանը հետապնդում էր Հայ Դատի լուծման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծման նպատակ:

«Հասարակական ծրագրի» շրջանակներում Հայկական Համագումարի ներկայացուցիչները բազմիցս ամերիկահայ համայնքն են ներկայացրել երկրի պաշտոնական տարբեր արարողությունների և հանդիսությունների ժամանակ, հանդիպումներ են ունեցել ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում նաև ԱՄՆ-ի նախագահների հետ, որոնց ընթացքում ներկայացրել են ամերիկահայերին հետաքրքրող բազմաբնույթ խնդիրները³⁷: Կազմակերպությունը մեծ ջանքեր է գործադրել նաև պաշտոնական ժխտակատարություններին ամերիկահայ հասարակական և մշակութային կազմակերպությունների մասնակցության ապահովման, ուղղությամբ, քանի որ այդ հանդիսությունների (օրինակ՝ ԱՄՆ-ի անկախության կամ նախագահի պաշտոնը հանդիսավոր ստանձնելու օրվա տոնախմբության) ժամանակ մեկ անգամ ևս հնարավորություն էր ընձեռվում հայ մշակույթը հասարակության լայն շրջաններին ներկայացնելու համար: Անշուշտ այս հանգամանքը նույնպես կապված էր ամերիկահայ համայնքի հասարակական կերպարի (իմիջի) բարձրացման հետ, որի անհրաժեշտությունը հաճախ էր ընդգծվում ամերիկահայ նշանավոր մտավորականների և գործիչների կողմից և որը դիտվում էր իբրև հայ համայնքը ճանաչված և ազդեցիկ հասարակական-քաղաքական ուժ դարձնելու կարևոր գործոն³⁸:

Ամփոփելով Հայկական Համագումարի «հասարակական ծրագրի» շրջանակներում 1972—1982 թթ. իրականացված գործունեությունը՝ վստահությամբ կարելի է եզրակացնել, որ արդեն այդ տարիներին կազմակերպությունը ԱՄՆ-ի հայ համայնքի ամենաազդեցիկներից մեկն էր: Հենց Հայկական Համագումարի գործունեությունն էր ուղղված ամերիկյան լրատվության զանգվածային միջոցների հետ հարաբերությունների իրականացման, հայ ազգային արժեքների օգտին ամերիկյան հասարակական կարծիքի ձևավորման գործին, որը վերջին հաշվով պետք է նպաստեր ամերիկյան հասարակության կողմից 1915 թ. Հայոց ցեղասպանության փաստի ճանաչմանը: Կազմակերպությունը անգնահատելի ներդրում ունի նաև հայ պատմամշակութային արժեքների, ընդհանրապես հայ համայնքի և հայ ժողովրդի վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների տարածման գործում: Հատկապես արդյունավետ և ուշագրավ էր նրա դերը Թուրքական քարոզչության դեմ պայքարելու ասպարեզում, որը, ինչպես ասվեց, օգտագործում էր հնարավոր բոլոր միջոցները, այդ թվում նաև լրատվական գործակալություններն ու պատմական

³⁷ Տե՛ս «Armenian Assembly of America. Aims and Accomplishments», p. 6:

³⁸ Տե՛ս Richard G. Hovannisian, editor, «The Armenian Image in History and Literature», Malibu, Ca., 1981, p. 251—256:

ուսումնասիրություններով զբաղվող հաստատությունները՝ Հայկական Դատը
ի դերն հանելու համար:

Այս առումով Հայկական Համագումարը առանձնահատուկ տեղ է զբա-
ղում ոչ միայն ամերիկահայ, այլև ամբողջ Սփյուռքի հասարակական բազ-
մաթիվ կազմակերպությունների շարքում:

К. Р. НАГАПЕТЯН—«Общественная программа» Армянской Ассамблеи Америки (1972—1982 гг).—1960—70-ые годы являются периодом небывалого подъема общественно-политической жизни армянской диаспоры. Среди различных организаций, деятельность которых ориентировалась на признание международной общественностью исторического факта Геноцида армян 1915 года, особое место принадлежит созданной в 1972 году Армянской Ассамблеи Америки. «Общественная программа» Ассамблеи предусматривает пояснение американской общественности интересующих армян вопросов с помощью средств массовой информации, отдельных публикаций и выставок. Важнейшими формами деятельности организации являются сбор и распространение правдивой информации об армянской общине США и проведение мероприятий для борьбы против турецкой антиармянской пропагандистской кампании, развернутой правящими кругами Турции. Формирование общественного мнения США в пользу национальных ценностей армян в конечном счете имеет целью создание более благоприятных условий для разрешения Армянского вопроса, в частности—признание общественно-политическими кругами США факта Геноцида армян в Османской империи.